ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«____» _____ 201 թ.

No _____

ՀՀ ՊԵԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

Հայտնում եմ Ձեզ, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ 2019 թվականի փետրվարի 11-ից դադարեցվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և «ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ» ՓԲԸ-ի միջև 2018 թվականի նոյեմբերի 21-ին կնքված անշարժ գույքի վարձակալության թիվ 6275, իսկ 2019 թվականի մարտի 3-ից՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և «ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ-ի միջև 2018 թվականի նոյեմբերի 21-ին կնքված անշարժ գույքի վարձակալության թիվ 6276 պայմանագրերը: Նշված կազմակերպությունների կողմից հարկային հաշիվների դուրսգրման e-Invoicing «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի և գրքերի կառավարման համակարգի» միջոցով Կոմիտեի անվամբ դուրս գրված հարկային հաշիվների, ինչպես նաև վերջիններիս կողմից 04.04.2019թ-ին կնքված փոխադարձ պարտավորությունների մասին ակտի համաձայն Կոմիտեի պարտքը կազմում է 30 240 092 ՀՀ դրամ:

Ուստի, վերոհիշյալ կազմակերպություններին վճարումներ իրականացնելու և պարտքերը մարելու նպատակով, խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4216 «Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով արտաբյուջետանին միջոցների 900013574018 հաշվով ապահովել դրական եզրակացություններ ստորև նշված գումարների չափով.

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

1. «ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ» ՓԲԸ՝ 1 566 092 ՀՀ դրամ,
2. «ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ՝ 28 674 000 ՀՀ դրամ:

Կից ներկայացվում են դուրս գրված հարկային հաշիվների, հանձնման-ընդունման արձանագրությունների լուսապատճենները:

Առդիր՝ 2 էլեկտրոնային ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՀ ՊԵԿ ՖԻՆԱՆՍԱՀԱՇՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ ֆինանսական բաժնի
գլխավոր մասնագետ՝ Հ. Ղազարյան
Հեռ. 060-544-683